№ 227 Դեկտեմբերի 5 (17) 1881 Դեկտեմբերի 5 (17) № 227

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստարաբաղդաբաց գրվում են ազգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն տեղում։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՑ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՒՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով.
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Թելեփոնն կամ Բանախօսական, VIII. Ցայտարարութիւններ։
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առանձին բաղդ ունենք։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ծրանուցում. Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մշակների դրութեան առիթով.

ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂԴ ՈՒՆԵՆՔ

Բաւական է որ „Մշակը“ մի բան յայտնի,—և ահա ամենքը սկսում են կատաղաբար յարձակվել նրա յայտնած մտքի վրա, համարում են մեր յայտնած միտքը վնասակար, ազդաշնաս, հրէշաւոր, անտեղի, անմիտ, ագիտութեան, անփորձութեան, անիսոհեմութեան արգասիք, խմբագրական պաշտօնին մեր անպատրաստ լինելուն, հայոց ազգային ոգուն, նրա պատմութեան չիմանալուն արդիւնք և այլն և այլն։

Եթէ շարունակենք բացատրել մեր միտքը, ծնվում է մի անվերջանալի բանակռիւ, որ շատ անգամ հրէշաւոր կերպարանք է ընդունում։ Սկսում են յեղաշրջել լօգիկան, մոլորեցնել հասարակական կարծիքը, սոֆիզմ սոֆիզմի վրա թափել, հայհոյել, վիրաւորել և այլն։

Բայց անցնում է փոքր ինչ ժամանակ, կրքերը հանդարտվում են, յիշողութիւնը թուլանում է, մնում է միայն արդար մտքի, ճշմարիտ գաղափարի տպաւորութիւնը, որ հաստատվում է իրական փաստերով,—և ահա նոյն մարդիկ, որոնք կատաղաբար մարանչում էին մեզ դէմ, անգիտակցաբար սկսում են կրկնել մեր մտքերը, առանց յիշելու թէ մեր մտքերն են կրկնում, հաւատացած լինելով որ նոր գիւտեր են արել....

Հազար ու մի օրինակներ կարող ենք բերել մեր խօսքերը ապացուցանելու համար։ Կը բերենք այսօրվայ մի քանի ապացոյցներ միայն։

Երբ մենք յարձակվում էինք Կ. Պոլսի հայերի վրա, Թիւրքահայ մամուլը կատաղաբար մեզ դէմ էր գրում և պաշտպանում էր Կ. Պոլսի հայերին, անուանելով մեր գրածները անտերկի զրպարտութիւններ։ Այժմ Կ. Պոլսի հայ մամուլը ինքն սկսում է անենայ կերպով քննադատել Թիւրքահայոց, մանաւանդ պոլսեցիների պակասութիւնները։

Երբ մենք համարձակվեցանք այն միտքը յայտնել թէ կրօնը այլ բան է, ազգութիւնը այլ բան, թէ կրօնը համոզմունք է, թէ կուզ պատմական, ուրեմն ենթակայ է, որպէս ամեն համոզմունք փոփոխման, իսկ ազգութիւնը մի ֆիզիկական, կամ աւելի լաւ է ասել մի ֆիզիօլոգիական, բնական երևոյթ, որ ուզածի պէս փոխել չէ կարելի, քանի որ բնակապէս կապված է հողի և մայրենի լեզուի հետ, որոնցից առաջինը պատմական—ֆիզիկական հիմք է, իսկ երկրորդը պատմական—ֆիզիօլոգիական, երբ մենք համարձակվեցանք, ասում ենք, այդ ճիշդ ճշմարտութիւնը արտայայտել,—էլ մարդ չը մնաց որ մեզ վրա չը յարձակվեր։ Իսկ այժմ Զմիւռնիայի „Արշալոյս Արարատեան“ լրագրի պէս մի ֆանատիկոս թերթն անգամ յանկարծ այն գիւտն է անում, թէ կրօնը և ազգութիւնը Ջոկ բաներ են, թէ կրօնը համոզմունք է, իսկ ազգութիւնը բնական, անփոփոխելի երևոյթ, թէ հայ-կաթոլիկները և Ազգերեան եպիսկոպոսն էլ հայեր են, և այլն։

Երբ դեռ Կ. Պոլսի թատրոնական խումբը եկած չէր Թիֆլիս, մենք յայտնեցինք այն միտքը, թէ այդ խումբը, որպէս Կ. Պոլսի բոլոր մնացած մտաւոր արտայայտութիւնները, անշուշտ բռմանտիական, մելոդրամական ուղղութիւն կունենայ, որ անյարմար է մեր հասարակութեանը և չէ կարող կրթիչ ազդեցութիւն ունենալ մեզ վրա։ Մենք գուշակում էինք որ Կ. Պոլսի դերասանները բռմանտիական ուղղութեանը ընտելացած լինելով, իրանց հետ կը բերեն մեզ և այդ ուղղութեամբ ըէպէրտուար, քանի որ ուրիշ ըէպէրտուարի մէջ խաղալ չեն կարող։ Մենք այդ հաստատ գիտէինք, որովհետև տարիների ընթացքին հետևում էինք Կ. Պոլսի գրականութեանը, թատրոնին, մտաւոր կեանքին։ Խումբն եկաւ, մեր մտքերը արդարացան, մենք շարունակեցինք նոյն մտքերը յայտնել և մեր թատրոնական ռէցէնզիաներում։ Բոլորը մեր դէմ էին, վրդովված էին մեր յայտնած մտքերով, գըրում, յարձակվում էին մեզ վրա։

Ժամանակն անցաւ, մենք դադարեցինք թատրոնի վրա խօսել։ Եւ ահա մեր հակառակորդները, մոռանալով թէ որտեղից են քաղում իրանց մտքերը, սկսում են այժմ, իբր ինքնուրոյն կերպով մեր մտքերը կրկնել, միայն աւելի անշնորհ և աւելի անկապ կերպով։

Դա մեր առանձին բաղդն է։ Մենք յայտնում ենք մտքեր, մեզ վրա անենայ յարձակվում են,—իսկ մի տարուց, գուցէ մի քանի ամսից յետոյ սկսում են նոյն մտքերը յայտնել, իբր ինքնուրոյն, անկախ գաղափարներ, կարծես թէ նոր գիւտ են արել։

Մենք բերեցինք մի քանի օրինակներ. կարող էինք հազար և մի օրինակներ բերել։

Կանցնի փոքր ինչ ժամանակ և մեր յայտնած մտքեր փոքրը առ փոքր և հետզհետէ կընդունվին, մանաւանդ երբ միտք յայտնողները իրանք այլ ևս կենդանի չեն լինի։ Մենք այդ բանի մէջ համոզված ենք, որովհետև մեր յայտնած մտքերը մեզանից հնարած չեն, այլ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան են պատկանում, իսկ մենք միմիայն նրանց թոյլ արտայայտիչներն ենք։

Իսկ ընդհանուր մարդկային ճշմարտութիւնները, ինչքան էլ ժամանակաւոր թշնամիներ ունենային, անպատճառ մի օր յաղթող կը հանդիսանան, որովհետև ճշմարտութիւնը վերջ ի վերջոյ յաղթող է հանդիսանում նախանձի, կրքի, ագիտութեան և բթամտութեան վրա։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇԱԿՆԵՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

—Ինչ հաչիւ, ինչ բան, ես քեզ չեմ արձակի, դու պարտաւոր էիր ինձ մի ամիս առաջ յայտնել քո դուրս գալը, որ ես մարդ վարձէի քո փոխարէնը, դու գիտես, որ ինձ ինչ վնաս կարող է բերել քո դուրս գալը գործի տաք ժամանակը—լինում է գործարանատիրոջ առաջին պատասխանը մշակին։ Գործարանատէրը գիտէ, որ մի հասարակ մշակի գործից հեռանալը նրան ոչինչ նիւթական վնաս չէ կարող հասցնել, բայց նա այդ ասում է ուրիշ մտքով։ Մշակը հասկանում է այդ միտքը և սկսում է խնդրել, աղաչել որ ինչպէս և իցէ վերջացնելով հաչիւը արձակի։ Գործարանատիրոջ սիրտը փոքր ինչ կակղում է մշակի աղաչանքներից և տալիս է նրա վերջնական հաչիւը, բայց վայ այն տալուն, որ նա է տալիս։—Քեզ պատկանում է—ասում է նա մշակին—տարի ու կէս գործելուդ համար այսքան գումար, սրանից ստացել ես այսքան, տասը շուշայ ես փչրել, դրա համար դուրս եմ բերում այսքան, այդ ինչ ժամանակ չես գործել, դուրս եմ բերում քո վարձից այդքան և վերջապէս մնում է այս, մա, ստացիր ու կորիր ջահանամը։ Հազար գոռայ, հազար աղաչի ու արտասուք թափի մշակը, ով է լսելու նրան։ Շատ կերկարացնի՝ չլինի մի քանի էլ կը տան ու ցեխի մէջ կը գլորեն։ Ճարահատեալ առնում է նա գործարանատէրից վերջին մի քանի սև կոպէկները ու աչքերը արտասուքով հեռանում դէպի իր հայրենիքը։

Ահա ինչպէս է նիւթապէս հարստահարվում ողորմելի մշակը անխիղճ, քարասիրտ Թուրք և շատ հայ գործարանատէրերի ձեռքում, բայց գանք թէ ֆիզիքապէս ինչպէս է հարստահարվում նա։

Մշակի ֆիզիքապէս հարստահարվելու մասին կարծես թէ աւելորդ է այլ ևս խօսել վերև բերած մի քանի տեղեկութիւններից յետոյ օրուայ մէջ 18—19—21 ժամ գործելու վերաբերմամբ։ Բայց ոչ, այդ դեռ փոքր է մշակի համար, նա գուցէ իրան քաղաւոր համարէր, եթէ թողնէին օրուայ այդ երկար միջոցը հանգիստ գործել։ Մշակի թշուառ անձը բացի այդ դեռ ևս շատ և շատ հարուածներ է ստանում իր տիրոջից, հարուածներ, որոնց մտաբերելու ժամանակ մարդ կամայ ակամայ զայրանում է տեսնելով թէ տասն և ինն երորդ լուսաւորեալ ասված դարի վերջին կէսում դեռ մնում, անհետացած չեն միջնադարեան ամենախիստ եգիպտական ինկվիզիցիայի հետքերը, դեռ նոքա ապրում և տիրում են այստեղ. Անդրկովկասի այդ մի անշան անկիւնում մի բուռը անգութ, անխղճ և ցած հարստահարիչների հսկողութեան ներքոյ, այն հարստահարիչների, որոնց համար, կարծես, ոչինչ սուրբ բան չը կայ, որոնք ամենայն բոպէ պատրաստ են իրանց շահերին զոհել ամեն բան, զոհել նաև իրանց եղբայրակիցների ու արիւնակիցների սուրբ, բնական մարդկային իրաւունքներից սկսած մինչև նրանց կեանքը։ Մի զայրանար այդ խօսքերի վրա, սիրելի ընթերցող. այն ինչ որ տեսնում և լսում է ամենայն օր ներկայ տողերը գրողը եթէ քեզ պատահէին տեսնել ու լսել, նոյնը կը կրկնէիր և դու, գուցէ առաւել տաք կերպով։ Սակայն մի քանի փաստերից դու կարող ես եզրակացնել թէ Բաղուի գործարաններում քանոր մշակների ֆիզիքական վիճակը օրըստ օրեալի է։ Ես չեմ խօսի այդ մասին երկարօրէն, ես չեմ պատմի մանրամասնօրէն այն անենայ թակի, ծեծի և փողոցային ամենագարշելի յիշոցների մասին, որոնցով ամենայն օր վարձատրում է գործարանատէրը խեղճ մշակին, այլ կարճառօտ կերպով կը պատմեմ երկու նշանաւոր դէպքեր, որոնց նմանը հազուագիւտ չեն մշակների կեանքում և վերջ կը տամ իմ ներկայ յօդուածին։ Այդ երկու դէպքերից մէկը պատմել է ինձ մի հայ գործարանատէր Ազ. Նաջարեան անունով, իսկ միւսը արդէն յայտնի է Բաղուի հասարակութեան, գուցէ տեղային լրագիրների միջոցով և ուրիշ հասարակութիւններին էլ։

Ահա պ. Նաջարեանի պատմածը. Թուրք գործարանատէրերից մէկը վարձում է մի մշակ նոյնպէս Թուրք, սովորաբար առանց գրաւոր պայմանագրութեան։ Անցնում են մի քանի ամիսներ և մշակը, որ ամենայն օր թակի, ծեծի և յիշոցների է ենթարկված լինում գործարանատէրից, վերջապէս մի օր կամենում է թողնել վերջինին և վարձվել մի ուրիշ գործարանատերի մօտ։ Թուրք գործարանատէրը չէ ուզում արձակել մշակին, իսկ վերջինը հաստատ մնալով իր կամքում, առանց սպասելու. իր վարձին կամենում է հաւաքել իր չորերը ու դուրս գալ. այդ ժամանակ գործարանատէրը հրամայում է իր միւս մշակներին կապել նրան մէկ սիւնի վրա ու ծեծել։ Սկսվում է եգիպտական ինկվիզիցիան և մշակի մարմինը փայտի անենայ հարուածների ոյժից զանազան տեղերից դուրս է հոսում արիւն. գառոցի ձայնի վրա վազում են հարևան գործարանատէրերը, որոնց թւում և պ. Նաջարեանը և ուշաթափ մշակին մերժ ի մահ խլում են գաղանաբարոյ Թուրք գործարանատէրի ձեռից։ Ցորս ամիս անկողնում պառկելուց յետո հաչիւ հաղ վերականգնում է նրա առողջութիւնը։

Երկրորդ դէպքը պատահում է Բալախանիում և ահա ինչպէս։ Մի հայ Ադամեան ազգանունով հանքատէրի նաւթային հորի երկաթի խողովակը,

Եւ մեր կենդանութեան ժամանակ մեր հակառակորդները, ինչպէս շատ անգամ արդէն մեզ առիթ տուած են, դեռ շատ անգամ մեզ առիթ կը տան ժպտալ նրանց զբուաձների մէջ կարդալով այնպիսի ճշմարտութիւնների յայտնելը, որոնց մի քանի ամիս առաջ նրանք երդուեալ թշնամիներ էին հանդիսանում։

Դեռ մեր գործունէութեան ասպարիզում շատ բան առիթ կունենանք ասելու աւելի յարմար ժամանակին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Թիֆլիսի արուեստաւորների վարչութիւնը Рем. Уст. прод. 1863 թ. о Проб. Палатахъ, 140 յօդուածի հիման վրա յայտնում է բոլոր վարպետներին, ոսկերչներին, արծաթագործներին, դազազներին, ժամագործներին և վաճառականներին, որոնք պարապում են Թիֆլիսում արծաթեայ և ոսկեայ արդիւնագործութեամբ, հրաւիրելով նրանց շտապել վեր առնել թղթատոմս վկայականներ արծաթեայ և ոսկեայ արդիւնքների պատրաստութեան և վաճառման համար մինչև յունվարի 1-ը 1882 թիւ։ Վարպետները և վաճառականները, որոնք չեն վեր առնի մինչև յունվար ամիս յիշեալ վկայականները, կենթարկվին կըլինակի վճարման տուգանքին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք «Ֆուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին 8 ռուբլ պ. Նապիանցից։ Նախկին 896 ռուբլ 15 կոպէկ գումարի հետ կանի 904 ռուբլ 15 կոպէկ։

Ոչ մի տարի «Մշակի» ստորագրութիւնը այդքան վաղ չէր սկսել և այդքան աջող չէր գնում, որքան այս տարի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Գամբետտայի բացատրութիւնները Ֆունիսի գործերի վերաբերութեամբ հաւանութեամբ ընդունվեցան գրեթէ բոլոր լրագիրներից։ Մինիստրութիւնը ամրացրեց իր հեղինակութիւնը շափաւոր հանգստութիւնների մտ։ Մինչև անգամ գերմանական մամուլը հաւանեց Գամբետտայի «ոպիլօմատիական» ձևը և գովեց Ֆրանսիական առաջին մինիստրի «պետական խելքը։» Կառավարութեան յաղթութիւնը պատգամաւորների ժողովի մէջ շատ նշանաւոր է։ 400 ձայներից գոյացած մեծամասնութիւնը մի յուսալի պաշտպանութիւն է, որ Գամբետտայի կառավարութեանը երկար կեանք է խոստանում։ Վերջին վիճաբանութիւնների հետևանքները պատգամաւորների ժողովի մէջ նորից ցոյց տուին թէ ինչպիսի հեշտութեամբ և հաստատամտութեամբ Գամբետտա կարողանում է կառավարել պարլամենտը։ Ֆրանսիական սենատի մէջ լինելու է աւելի հետաքրքիր ճարտասանական մրցութիւն։ Դուքս դը-Բրոլի և Ժիւլ-Սիմոն մտադիր են կառավարութեանը հարց առաջարկել արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ։ Դուքս դը-Բրոլի կամենում է ապացուցել, որ Ֆունիսի անցքերը վատացրին Ֆրանսիայի յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ և որ նոր մինիստրութեան քաղաքական նախագիծը այդ առարկայի վերաբերութեամբ չի ուղղի նախկին կառավարութեան սխալները։ Գամբետտա օգուտ կը քաղէ այդ դէպքից և կը մեկնէ իր արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը ընդհանրապէս և մասամբ իր խաղաղասիրական նպատակները։

Պատգամաւորների ժողովի մէջ Ֆունիսի հարցը քննվելուց յետոյ միւս օրը Գամբետտա տպարացաւ և ոչ ոքի չէր ընդունում։ Այդ հիւանդութիւնը հասանալի է պարլամենտական դժուար կուսից յետոյ Ֆունիսի հարցի վերաբերութեամբ, որ մեծ նշանակութիւն ունէր մինիստրութեան համար։ Կառավարութեան կողմից միայն Գամբետտա էր մասնակցում վիճաբանութիւններին։ Մնացած մինիստրները բոլոր ժամանակ լուռ էին և Գամբետտայի քարտուղարների դեր էին կատարում։ Առաջին մինիստրի անձնական հեղինակութիւնը հեռացրեց մեծամասնում է։ Երկու նոր մինիստրներին նշանակելու հրամանը մի քանի անբաւականութիւնների առիթ տուեց։ Պարլամենտական մասնաժողովը չէր կամենում հաստատել կառավարութեան պահանջած կրեդիտը, անկասօն համարելով երկու նոր մինիստրութիւնների հիմնելը առանց պատգամաւորների ժողովի համաձայնութեան։ Առևտրական մինիստրը մինչև այդ ժամանակ բնակարան չունէր իր և իր մինիստրութեան վարչութեան համար։ Գեղարուեստների մինիստրը, որի իշխանութեան տակ են պետական բոլոր շինութիւնները, իզուր էր աշխատում իր ընկերոջ համար բնակարան գտնել։ Մի և նոյն ժամանակ ինքը գեղարուեստների մինիստրն էլ բնակարան չունէր։ Երկուսի դրութիւնն էլ ծիծաղելի էր։ Վերջապէս պարլամենտական մասնաժողովը համաձայնվեց հաստատել պահանջած ծախսերը այն պայմանով, որ կառավարութիւնը ապագայում առանց պատգամաւորների ժողովի համաձայնութեան այդպիսի կարգադրութիւններ չանէ, որոնց համար նոր ծախսեր են հարկաւոր։

Գեներալ Շանզի, որ ուղարկվել է Ս. Պետերբուրգ իր արձակման թղթերը ռուսաց կայսրին յանձնելու համար, ճանապարհ ընկնելուց առաջ խորհրդակցութիւն ունեցաւ հանրապետութեան նախագահ Գրեվիի հետ։ Շանզի Ֆրանսիական 6-դ զօրաբաժնի գլխաւոր հրամանատար կը նշանակվի։ Պատերազմական այժմեան մինիստրը հրաժարվեց յանձնել իր նախորդ գեներալ Ֆարրին մի զօրաբաժնի հրամանատարութիւնը։ „Nouvelle Revue“ ամսագրի մէջ արտատպած է երևելի Լեսեպսի յօդուածը, որով նա հերքում է այն միտքը, իբր թէ արաբների շարժումը ներշնչված է կրօնական ֆանատիկոսութենից, որ յատուկ է միայն թիւրքերին։ Յօդուածի հեղինակը առաջ է բերում Ղօրանից գլուխներ, որոնք վկայում են Մահմեդի բարեկամութիւնը քրիստոնեաների հետ։ Լեսեպս առաջ է բերում հետևեալ փաստը, որ, երբ Ֆրանսիան ձեռք բերեց Ալժիրիան, նա հարկաւոր համարեց Ֆունիսի բէյին իր դաշնակից դարձնել։ 1830 թուականին Ալժիրիան և Օրանը նուաճելուց յետոյ, երբ Ֆրանսիական կառավարութիւնը վճռեց դրաւել այդ երկիրները, Ֆրանսիական հիւպատոս Լեսեպս, Ֆերդինանդ Լեսեպսի հայրը, մի համաձայնութիւն կայացրեց Ֆունիսի բէյի հետ, որի համեմատ բէյի եղբայրը և ժառանգը պէտք է տիրէր կօնստանտինային և Ֆրանսիային հարկ վճարէր։ Այդպիսով կօնստանտինան Ֆունիսի մի մասը պէտք է համարվեր, բայց Ֆրանսիական կառավարութիւնը չը վաւերացրեց այդ համաձայնութիւնը։ Լեսեպս այն ժամանակ ծառայում էր իր հօր գրասենեակի մէջ, այնպէս որ նա 50 տարի շարունակ ծանօթ է Հիւսիսային Աֆրիկայի գործերի հետ։

Պատգամաւոր Անատոլ դը-Լեռֆօրժ յայտնեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Պոլ Բերին, որ նա մտադիր է հարց առաջարկել մինիստրի եկեղեցական քաղաքականութեան վերաբերութեամբ, բայց Պոլ Բեր խնդրեց յետաձգել այդ հարցը մինչև յունվար, որովհետև մինչև այդ ժամանակ պատրաստ կը լինի մտադրված օրինագիծը եկեղեցու յարաբերութիւնների մասին դէպի պետութիւնը։

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ դեսպաններին տուած ճաշի ժամանակ Գամբետտա ծանօթացրեց պապական նունցիայ Զացկուն մինիստր Պոլ Բերի հետ։ Այդ ծանօթութեանը ամենքը հետաքրքրութեամբ վերաբերվեցան։ Մանսիոր Զացկի ճաշի ժամանակ նստած էր այն տեղը, ուր սովորաբար նստում է տան տիկինը։ Նրա մտ նստած էին իշխան Հօհենլօհէ և կոմ Բէյստ, իսկ Գամբետտայի մտ ուսաց դեսպան իշխան Օլլով և անգլիական դեսպան լորդ Լայօնս։ Լրագիրները հաղորդում են, որ դեսպանները շատ գոհ մնացին Գամբետտայի սիրալիր ընդունելութենից և նրա երևելի խոհարար Տրամպետտի արհեստից։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 25 Նոյեմբերի 81

Ազգ. ժողովը վաղը պիտի գումարի. ժողովուրդը չիմացած է, չը գիտեր թէ ինչ պիտի ընէ։ Դիւանները շաբաթ առաւ գումարման մասին ընդարձակ տեղեկութիւններ չը տարածվեցան։— Ազգ. խմբագրութիւնը ապուշի զեր կը կատարէ. գիտէ որ պատրիարքը Դրան persona grata չէ, ինքն ալ խոհեմութիւն ընելու համար կը լռէ։ Եթէ այսպիսի պարագայի մը մէջ մասուլը կը լռէ, երբ պիտի խօսի։— Ազգ ժողովոյ մէջ դեր կատարողները լռիկ կը զբաղեն և հաւանական է որ վաղուան նստին ներկայ չը գտնուին։— Շատ խատութիւն կայ որ ժողովրդական յուզում տեղի չունենայ. ժողովը թէպէտ դռնբաց պիտի ըլլայ, բայց—150—հոգւոյ մենակ տոմսակ տրուած է մտաւոր համար։—Բարդուղիմէոս եպիսկոպոսի անունը կը փոփոքուսի, բայց առանց համարձակելու յայտնի ըսելու։ Բարդուղիմէոս եպիսկոպոսը կարմրասակ ձեռնասուն վարդապետ մը ունի, Սուփան վարդապետ, որ ամիս ու կէս հոս թափառեցաւ, պէտք եղած տեղերը գնաց, լրագրոյ խմբագրութիւնները այցելեց, փարձիչ շարոցներ ի ձեռին։

որի լայնութիւնը (діаметръ) լինում է 16 դիւյմ, 6 սաժէն խորութիւնում, չը գիտեմ ինչպէս, ծրվում է, որ սովորական է բոլոր նոր քանդվող հորերի համար։ Այդ ժամանակ հանքահորի կառավարիչ գործակատարը փոխանակ այդ դէպքի համար նշանակված գործիքի, մի պատանի թուրք մշակի ձեռը տալով թոկի ծայրը, հրամայում է նրան իջնել խողովակի ներսը և ուղղել վերջինը։ Պատանի մշակը համաձայնվում է և թոկի ծայրից բռնած իջնում է խողովակի միջով անդունդը. բայց այդ ժամանակը հորի մէջ գոյացած գազը խեղդում է մշակին և նա չնչասպառ թուլանալով, բաց է թողնում թոկի ծայրը ու գլորվում խողովակի ներսը։ Դրսում լինողները տեսնելով որ թոկը թեթևեց, սկսում են կանչել դէպի ներս մտնող մշակին, բայց սա ոչինչ չէ պատասխանում և իսկոյն հասկանում են, որ նա ուշաթափ է եղել։ Հարկիկ գործակատարը մնում է չու